ԳԴ/0016/01/24
(ՀԿԴ2/0034/01/23)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 մարտի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին փոխարինող Արթուր Պողոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԳԴ/0016/01/24 (ՀԿԴ2/0034/01/23) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 23-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի սեպտեմբերի 27-ին Հակակոռուպցիոն դատարանում ստացվել է Գագիկ Սերյոժայի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 521-րդ հոդվածի 1-ին մասով, Գևորգ Ղազարոսի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-

րդ մասի 1-ին կետով, 166-րդ հոդվածի 2-րդ ամսի 6-րդ կետով, 521-րդ հոդվածի 1-ին մասով և Գոռ Մայիսի Բաղդասարյան վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին մասով, 520-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 90668422 (ՀԿԴ2/0034/01/23) քրեական վարույթը:

1.1. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 29-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ2/0034/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թվականի հոկտեմբերի 10-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Հակակոռուպցիոն դատարանը, 2024 թվականի փետրվարի 7-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

2. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի փետրվարի 23-ին որոշում է կայացրել թիվ ԳԴ/0016/01/24 (ՀԿԴ2/0034/01/23) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի փետրվարի 27-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. 2023 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ Գագիկ Սերյոժայի Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 521-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա հանդիսանալով ՀՀ ՊՆ 55076 զորամասի Դ-20 հրետանային դիվիզիոնի 1-ին մարտկոցի ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, Գևորգ Ղազարոսի Պետրոսյանի հետ 2022 թվականի նոյեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածում մարտական հերթապահություն են իրականացրել Վարդենիսի պաշտպանության շրջանի Արփունք գյուղի 555 ԱՄՀԳ-ի պաշտպանության տեղամասում, որի ժամանակ գույքի գաղտնի հափշտակություն*

կատարելու դիտավորությամբ, մեկը մյուսի գործողությունները լրացնելով և համատեղ ուժերով, միասնական նպատակին հասնելու համար, քննությամբ չպարզված օրը, իրենց կացարանից գաղտնի հափշտակել են 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անձնակազմին հատկացված պահածոյացված մեկ արկղ պարողությամբ, ընդհանուր 26.840 դրամ արժողության 20 հատ շոգեխաշած միս և իրացրել Արփունք գյուղում գտնվող Նաիրի Խաչատրյանի կողմից շահագործվող մթերային խանութում, որի դիմաց վերջինիցս ստացել են մեկ շիշ 0,5 լիտր պարողությամբ կոնյակ՝ այդ կերպ ՀՀ Պաշտպանության նախարարությանը պատճառելով 26.840 դրամի գույքային վնաս:

Բացի այդ, շարքային Գագիկ Հակոբյանը, ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ և 16-րդ հոդվածների համաձայն պարտավոր լինելով բարձր պահել զինվորական ընկերասիրությունը, զինծառայողների նկատմամբ թույլ չտալ կոպտություն և ծաղրուծանակ, պահպանել զինվորական ընկերասիրությունը, հարգել նրանցից յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը, պահպանել զինվորական հարգանքի և վարքի կանոնները, հարգանք տածել զինծառայողների նկատմամբ, զինծառայողների համար նախատեսված մեկ արկղ պահածո գաղտնի հաշփտակելու հարցի շուրջ 2022 թվականի դեկտեմբերի 3-ին՝ ժամը 20-ի սահմաններում, տարաձայնություն ունենալով շարքային Գևորգ Պետրոսյանի հետ, խախտել է զինծառայողների փոխհարաբերությունների վերը նշված կանոնագրքային կանոնները և սպորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, Արփունք գյուղի 555 ԱՄՀԳ-ի պաշտպանության տեղամասում գտնվող զինվորական ծառայողների համար նախատեսված կացարանի տարածքում ոտքով հարվածել է Գևորգ Պետրոսյանի որովայնի որովայնին (…)»[1]*:*

2023 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ Գևորգ Ղազարոսի Պետրոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 166-րդ հոդվածի 2-րդ ամսի 6-րդ կետով, 521-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա հանդիսանալով ժամկետային*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 223-224:

զինծառայող, շարքային խմբի կազմում նախնական համաձայնությամբ կատարել է գաղտնի հափշտակություն, ինչպես նաև սպորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության պայմաններում խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները՝ ժամկետային զինծառայող Գագիկ Սերյոժայի Հակոբյանի առողջությանը զենքի գործադրմամբ պատճառել է ծանր վնաս:

Այսպես.

Գևորգ Պետրոսյանը, հանդիսանալով ՀՀ ՊՆ 55076 զորամասի Դ-20 հրետանային դիվիզիոնի 1-ին մարտկոցի ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, նույն մարտկոցի ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, Գագիկ Սերյոժայի Հակոբյանի հետ 2022 թվականի նոյեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածում մարտական հերթապահություն են իրականացրել Վարդենիսի պաշտպանության շրջանի Արփունք գյուղի 555 ԱՄՀԳ-ի պաշտպանության տեղամասում, որի ժամանակ գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, մեկը մյուսի գործողությունները լրացնելով և համատեղ ուժերով, միասնական նպատակին հասնելու համար, քնությամբ չպարզված օրը, իրենց կացարանից գաղտնի հափշտակել են 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անձնակազմին հատկացված պահածոյացված մեկ արկղ պարողությամբ, ընդհանուր 26.840 դրամ արժողության 20 հատ շոգեխաշած միս և իրացրել Արփունք գյուղում գտնվող Նաիրի Խաչատրյանի կողմից շահագործվող մթերային խանութում, որի դիմաց վերջինիցս ստացել են մեկ շիշ 0,5 լիտր պարողությամբ կոնյակ՝ այդ կերպ ՀՀ Պաշտպանության նախարարությանը պատճառելով մանր չափի՝ 26.840 դրամի գույքային վնաս:

Բացի այդ, Գեղարքունիքի մարզի Արփունք գյուղի 555 ԱՄՀԳ-ի պաշտպանության տեղամասում շարքային Գևորգ Պետրոսյանը 2022 թվականի դեկտեմբերի 3-ին՝ երեկոյան, զինծառայողի համար նախատեսված մեկ արկղ պահածո գաղտնի հաշիտակելու հարցի շուրջ տարաձայնություն է ունեցել նույն մարտկոցի զինծառայողներ զինվորական կոչումով իրենից բարձր կրտսեր սերժանտ Արամ Արմենի Մարկոսյանի և հրամանատար, ավագ լեյտենանտ Գոռ

Մայիսի Բաղդասարյանի, ինչպես նաև շարքային Գագիկ Սերյոժայի Հակոբյանի հետ, որի ընթացքում նրանց կողմից ենթարկվել է բռնության և պարսավանքի: Ժամը 20-ի սահմաններում, Գևորգ Պետրոսյանը Գագիկ Հակոբյանի հետ գտնվելով կացարանում՝ վառարանի մոտ, վերջինիս մեղադրել է իրեն վերագրվող պահածոների հափշտակությունը կատարելու մեջ՝ հնչեցնելով նրա նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիք: Գագիկ Հակոբյանը, չցանկանալով վեճի բռնվել Գևորգ Պետրոսյանի հետ, դուրս է եկել նշված սենյակից և գնացել քնելու համար նախատեսված սենյակ: Գևորգ Պետրոսյանը, խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները՝ սյորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, ինչպես նաև ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ և 16-րդ հոդվածներով նախատեսված զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները, համաձայն որոնց պարտավոր լինելով բարձր պահել զինվորական ընկերասիրությունը, զինծառայողների նկատմամբ թույլ չտալ կոպտություն և ծաղրուծանակ, պահպանել զինվորական ընկերասիրությունը, հարգել նրանցից յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը, իր և ուրիշ զինծառայողների նկատմամբ թույլ չտալ կոպտություն և ծաղրուծանակ, պահպանել զինվորական հարգանքի և վարքի կանոնները, հարգանք տածել զինծառայողների նկատմամբ, Գագիկ Հակոբյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու դիտավորությամբ, գնացել է քնելատեղի, նույն վայրում գտնվող զինաբուրգից վերցրել է ԱԿ-74 698187 համարի ինքնաձիգը և կրակել է վերջինս աջ ազդրին՝ նրա առողջությանը պատճառելով աջ սրտրին վերջույթի՝ ազդրի սրտրին երրորդականի ամպուտացիայի ձևով ծանր վնաս (…)»[2]:

2023 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ Գոռ Մայիսի Բաղդասարյան նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին մասով, 520-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա հանդիսանալով հրամանատար (պետ), չարաշահել է իշխանությունը՝ հանցագործությունների մասին չի զեկուցել անհապաղ, որն*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 247-248:

առաջացրել է հանցանքի պարտականում, ինչպես նաև զինվորական ծառայություն կրելու վայրում խմբի կազմում զինվորական կոչումով բարձր այլ վերադաս զինծառայողի հետ սպորադաաի նկատմամբ գործադրել է զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված բռնություն:

Այսպես.

ՀՀ ՊՆ 55076 զորամասի Դ-20 ՀԴՆ-ի 1-ին ՀՐՄ-ի հրամանատարի ՊԺԿ, կոչումով ավագ լեյտենանտ Գոո Մայիսի Բաղդասարյանը, հանդիսանալով հրամանատար (պետ)՝ զինվորական կոչումով և ծառայողական դիրքով մարտկոցի զինծառայողներից բարձր անձ, ինչպես նաև նրանց վերադասը, ունենալով իր լիազորություններից բխող հրամաններ կամ կարգադրություններ տալու կամ դրանց կատարումն ապահովելու իրավասություն, ՀՀ ՊՆ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ պատասխանատու լինելով զինվորական կարգապահության, բարոյահոգեբանական վիճակի և զինվորական ծառայության անվտանգության, ներքին կարգուկանոնի համար, իսկ նույն կանոնակարգի 76-րդ հոդվածի համաձայն՝ պարտավոր լինելով ենթակաների մեջ ձևավորել զսպվածություն, զինվորական ընկերականություն, օգտագործել դաստիարակվածության անձնական օրինակը, ծառայության նկատմամբ հավասար վերաբերմունքը, փոխհարաբերությունների մեջ թույլ չտալ անտակտություն և կոպտություն, իսկ ԶՈՒ Կարգապահական կանոնագրքի 4-րդ հոդվածի համաձայն պատասխանատու լինելով ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ՝ նպատակ ունենալով ապահովել զորամասի (սպորաբաժանման) մարտունակությունը և առաջադրված խնդիրների կատարումը, հետևողական աշխատանք տանել հանցագործությունների, պատահարների և կարգապահական խախտումների կանխման ուղղությամբ, հանցագործությունների ու պատահարների մասին զեկուցել անհապաղ, խախտել է նշված իրավական ակտերով սահմանված պահանջները, մասնավորապես՝ 2022 թվականի դեկտեմբերի 03-ին զինվորական ծառայության կրելու վայրում՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արփունք բնակավայրի 555 ԱՄՀԳ-ի պաշտպանության տեղամասում, տեղեկանալով իր սպորադաս (ենթակա) զինծառայողներ՝ շարքայիններ Գևորգ

Ղազարոսի Պետրոսյանի և Գագիկ Սերյոժայի Հակոբյանի կողմից 2022 թվականի նոյեմբերին՝ քննությամբ դեռևս չպարզված օրը, խմբի կազմում նախնական համաձայնությամբ, զինծառայողներին հատկացված, վաճառքի համար չնախատեսված, պահածոյացված մեկ արկղ մանր չափերի՝ ընդհանուր 26.840 դրամ արժողության 20 հատ, շոգեխաշած միս գաղտնի հափշտակելու դեպքի մասին, չի կատարել իր ծառայողական պարտականությունները՝ անհապաղ չի զեկուցել վերադաս հրամանատարությանը, որն առաջացրել է հանցանքի պարտակում:

Այնուհետև, Գոո Բաղդասարյանը, խախտելով ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքով նախատեսված զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները, փորձել է ինքնուրույն գնահատականի արժանացնել նրանց գործողությունները, այն է՝ գողության կատարման համար ժամկետային զինծառայող Գևորգ Պետրոսյանին պատժելու նպատակով, ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Արամ Արմենի Մարկոսյանի հետ խմբի կազմում, մեկը մյուսի գործողությունները փոխլրացնելով, նույն օրը բռնություն են գործադրել Գևորգ Պետրոսյանի նկատմամբ՝ բռունցքներով հարվածներ հասցնելով վերջինիս մարմնի տարբեր մասերին:

Գևորգ Պետրոսյանը և Գագիկ Հակոբյանը, օգտվելով ստեղծված անառողջ մթնոլորտից, նույն օրը շարունակել են պահածոյի հափշտակության հարցի շուրջ վիճաբանությունը՝ միմյանց մեղադրելով դրա կատարման մեջ, որի ընթացքում Գագիկ Հակոբյանը, խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների վերը նշված կանոնագրքային կանոնները, ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, 555 ԱՄՀԳ-ի պաշտպանության տեղամասի տարածքում Գոո Բաղդասարյանի ներկայությամբ ոտքով հարվածել է Գևորգ Պետրոսյանի որովայնին: Հիշյալ պայմաններում Գոո Բաղդասարյանը, շարունակելով իր հանցավոր դիտավորությունը, չի կատարել ծառայողական պարտականությունները՝ կատարված հանցանքների մասին անհապաղ չի զեկուցել

վերադաս հրամանատարությանը, որն առաջացրել է հանցանքի պարտակում (…)»[3]*:*

5. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի փետրվարին 7-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանն արձանագրում է, որ՝*

1) մեղադրյալներ՝

1.1) Գագիկ Սերյոժայի Հակոբյանին ներկայացված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 521-րդ հոդվածի 1-ին մասով.

1.2) Գևորգ Ղազարոսի Պետրոսյանին ներկայացված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ ամսի 6-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 521-րդ հոդվածի 1-ին մասով.

1.3) Գոո Մայիսի Բաղդասարյանին ներկայացված ՀՀ քրեական օրենսգրքի 520-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով.

հանցանքները ներառված չեն 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում առկա կոռուպցիոն հանցանքների ցանկում, հետևաբար չեն հանդիսանում կոռուպցիոն բնույթի հանցանքներ

2) մեղադրյալ Գոո Մայիսի Բաղդասարյանին ներկայացված ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին մասով ենթադրյալ արարքը չի կատարվել շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով, որպիսի պարտադիր պայման է նախատեսում ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին թիվ ՀՕ-31-Ն օրենքը՝ ուժի մեջ մտած 2024 թվականի փետրվարի 06-ից, ինչից ելնելով ևս չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի հանցանք.

3) մեղադրյալներին մեղսագրվող ենթադրաբար կատարված հանցանքները կատարվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 256-258:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի վարույթում քննվող թիվ ՀԿԴ2/0034/01/23 քրեական վարույթը, ըստ առարկայական ընդդատության, պետք է ուղարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (…)»[4]:

6. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն քրեական վարույթով մեղադրյալ Գոռ Մայիսի Բաղդասարյանին ներկայացվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին մասով ենթադրյալ արարք կատարելու համար, որը համաձայն քրեական գործում առկա նյութերի չի կատարվել շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:*

Դատարանը արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով ամրագրված է կոռուպցիոն հանցագործությունների ցանկում ներառված ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածում առկա բացառությունը, վերաբերվում է այն դեպքերին, երբ հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, կատարվել է միաժամանակ շահադիտական դրդումներից չելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:

Դատարանը նման եզրահանգման է գալիս այն պատճառաբանությամբ, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն.

1. Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 9, թերթեր 107-111:

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, կամ

2) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, կամ

3) նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով: (...)»:

14. Հետևաբար մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված այն վարույթները, երբ իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը միաժամանակ կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:

Վերոգրյալի հաշվառմամբ նկատի ունենալով, որ սույն վարույթով մեղադրյալ Գոո Մայիսի Բաղդասարյանին ներկայացվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին մասով, այն արարքի կատարման համար, որ հանդիսանալով հրամանատար (պետ)՝ զինվորական կոչումով և ծառայողական դիրքով մարտկոցի զինծառայողներից բարձր անձ, ինչպես նաև նրանց վերադասը, ունենալով իր լիազորություններից բխող հրամաններ կամ կարգադրություններ տալու կամ դրանց կատարումն ապահովելու իրավասություն, (...) հետևողական աշխատանք տանել հանցագործությունների, պատահարների և կարգապահական խախտումների կանխման ուղղությամբ, հանցագործությունների ու պատահարների մասին զեկուցել անհապաղ, խախտել է նշված իրավական ակտերով սահմանված պահանջները, մասնավորապես՝ 2022 թվականի դեկտեմբերի 03-ին զինվորական ծառայության կրելու վայրում՝ (...) տեղեկանալով իր ստորադաս (ենթակա) զինծառայողներ՝ շարքայիններ Գևորգ Ղազարոսի Պետրոսյանի և Գագիկ Սերյոժայի Հակոբյանի կողմից (...) հափշտակելու դեպքի մասին, չի կատարել իր ծառայողական պարտականությունները՝ անհապաղ չի զեկուցել վերադաս

հրամանատարությանը, որն առաջացրել է հանցանքի պարտակում, ինչից պարզ է դառնում, որ Գոո Մայիսի Բաղդասարյանին մեղսագրված չէ և վերջինս էլ ենթադրաբար իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը չի կատարել բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:

15. Հետևաբար Դատարանը գտնում է, որ Գոո Մայիսի Բաղդասարյանին մեղսագրված է ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում առկա կոռուպցիոն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի ենթադրյալ կատարում, ուստի սույն որոշման 12-րդ կետում շարադրված իրավական նորմերի համաձայն թիվ ԳԴ/0016/01/24 (ՀԿԴ2/0034/01/23) քրեական վարույթը առարկայական առումով ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, ինչն էլ հիմք է հանդիսանում Դատարանի համար իր անհամաձայնությունն հայտնել սույն քրեական վարույթի առարկայական ընդդատության հետ կապված (…)»[5]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ ԳԴ/0016/01/24 (ՀԿԴ2/0034/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

[5] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 9, թերթեր 118-123:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[6]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[7]:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ

---

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապաշարմունքվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[8]:

11. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ*

[8] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այդ որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Օրենսգրքի հավելված N 1-ում՝ (…)*

«Հոդված 549. Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը» *բառերից հետո լրացնել «(բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն*

գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)» բառերով»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում*

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, կամ

2) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, կամ

3) նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով:

(…)

4. Եթե նորմատիվ իրավական ակտում թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, ապա չի կարող կիրառվել «և» կամ «ու» շաղկապը, կամ դրանք չեն կարող բաժանվել ստորակետով կամ կետադրական այլ նշանով»:

12.1. Նշված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածը չի համարվում կոռուպցիոն բնույթի հանցանք հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում՝ երբ արարքը կատարվել է ա) ոչ շահադիտական դրդումներից ելնելով, բ) բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով: Հետևաբար, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում հանցանքը համարվում է կոռուպցիոն բնույթի և ենթակա չէ փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը փաստելով, որ Գ.Բաղդասարյանին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ արարքը չի կատարվել *«շահադիտական դրդումներից ելնելով և*

բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով»՝ գտել է, որ մեղադրյալներին մեղսագրված հանցանքներից ոչ մեկը չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի[9]:

- Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն արձանագրելով, որ Գոռ Բաղդասարյանին *«բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով»* կատարելու որակյալ հատկանիշը մեղսագրված չէ՝ փաստել է, որ ենթադրյալ հանցանքը հանդիսանում է կոռուպցիոն բնույթի[10]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ Գոռ Բաղդասարյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման բովանդակությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ հանցանքը ***«բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելու»*** եղանակով կատարելու հատկանիշը Գ.Բաղդասարյանին մեղսագրված չէ, հետևաբար նշված պայմանի բացակայության պայմաններում, արարքը շարունակում է համարվել կոռուպցիոն բնույթի:

Հետևաբար, գտնում ենք, որ սույն վարույթը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը բացակայում է:

15. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԳԴ/0016/01/24 (ՀԿԴ2/0034/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր է:

---

[9] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

16. Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ թիվ ԳԴ/0016/01/24 (ՀԿԴ2/0034/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Գագիկ Սերյոժայի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 521-րդ հոդվածի 1-ին մասով, Գևորգ Ղազարոսի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 166-րդ հոդվածի 2-րդ ամսի 6-րդ կետով, 521-րդ հոդվածի 1-ին մասով և Գոռ Մայիսի Բաղդասարյան վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին մասով, 520-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԳԴ/0016/01/24 (ՀԿԴ2/0034/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ